ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 221-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի ա, դ և զ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2026 թվականի փետրվարի 05-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» թիվ 26-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 2026 թվականի հոկտեմբերի 22-ին անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Երկրաշարժի դեպքում տարահանման, հրդեհաշիջման, որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը Մալիշկա բնակավայրի թիվ 1 միջնակարգ դպրոցում» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության (այսուհետ ՀՀ ՆԳՆ ՓԾ) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին,

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

1) Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետի տեղակալ, փ/ծ գնդապետ Ռ. Զոհրաբյան,

2) խաղարկման խումբ՝

խմբի ղեկավար, Վայոց ձորի ՄՓՎ Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Ս. Հարությունյան,

3) Վերլուծության խումբ՝

խմբի ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Վ. Գրիգորյան,

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1)Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությանը,

2)Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոցի անձնակազմը (համաձայնությամբ),

3)«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ Եղեգնաձորի տարածքային տեղամասը (համաձայնությամբ),

4)ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժինը և պարեկային ծառայությունը (համաձայնությամբ),

5)<<ՀԷՑ>> ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասը (համաձայնությամբ),

6)Եղեգնաձորի շտապօգնության անձնակազմը (համաձայնությամբ),

7)ԿԽԸ Վայոց ձորի մարզի մասնաճյուղի արագ արձագանքման թիմը (համաձայնությամբ):

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Ռ. Զոհրաբյանին՝

1)ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը,

2)ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1)պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները գույքով, սարքավորումներով և տեխնիկայով,

2)ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

3)ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնների պահանջների կատարումը,

4)պատրաստ լինել ուսումնավարժության ղեկավարին զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

6.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավար, Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանի վրա:

7. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

Recoverable Signature

X

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639 Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 25

ք. Եղեգնաձոր